

Հ.Ս. ՍԱՐԱՖՅԱՆ, Ս.Ն. ՄԿՈՅԱՆ

**ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

(«Գլորիա» կարի ֆաբրիկայի օրինակով)
(Գյումրի)

Առաջարկվում է ձեռնարկության ինովացիոն գործունեության արդյունավետության գնահատման մեթոդ, որը ներառում է ռեսուրսային, արդյունքային և վիճակագրական բաղադրիչներ: Վերջիններից յուրաքանչյուրը գնահատում է ինովացիոն գործունեության հետազոտվող ռազմավարական բնութագրի համապատասխան տարրը:

Առանցքային բառեր. ինովացիա, տեսակարար գործակից, նոու-հաու, արդիակա-նացման գործակից, պիտանության գործակից:

Ներածություն. Ինովացիոն գործընթացների (դրանց նպատակային բնութագրերի) անընդհատ կառավարումը առաջնահերթ գործոն է ձեռնարկության կայուն ու նպատակաուղղված զարգացման համար՝ արտաքին միջավայրի անընդհատ փոփոխությունների ու շուկայի այլ մասնակիցների կողմից մրցակցության ուժեղացման պայմաններում:

Արտաքին միջավայրի գործոնների հաշվառմամբ ձեռնարկության օպտիմալ ինովացիոն ռազմավարության ընտրության և հետագա օգտագործման համար անհրաժեշտ է գնահատական տալ ձեռնարկության ռեսուրսային պոտենցիալին, այսինքն՝ դրա քաղաքական ու որակական բաղադրիչին:

Ընտրելով օպտիմալ ինովացիոն ռազմավարությունը՝ ձեռնարկությունը ձեռնամուխ է լինում դրա իրականացմանը՝ անցկացնել ով ինովացիոն ռազմավարության պարբերաբար վերահսկում՝ դրա արդյունավետության ստուգման նպատակով:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը. Վերը նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է գնահատել ձեռնարկության ինովացիոն գործունեության ռեսուրսային և արդյունքային բաղադրիչները:

Հաշվի առնելով, որ ձեռնարկության ինովացիոն գործունեությունը բարդ և բազմաբաղադրիչ հասկացություն է, անհրաժեշտ է ուսումնասիրել դրա հիմնական չափանիշները՝ համակարգման միջոցով, և մշակել ձեռնարկության ինովացիոն զարգացման ռազմավարական բնութագրի համալիր գնահատման մեթոդակարգը:

Այս հարցին վերաբերող բոլոր հետազոտություններում գիտնականներն

առաջարկում են ձեռնարկության ինովացիոն գործունեության համալիր գնահատման մի շարք մեթոդակարգեր, որոնցից շատերը գնահատում են միայն ներդրված նորարարություններից ստացվող արդյունքը, հաշվի չառնելով, որ ինովացիոն գործունեությունը դինամիկ բնութագիր է ներկայացնում և իրականացվում է ձեռնարկության ռեսուրսային պոտենցիալի հիման վրա [1]: Այլ գիտնականներ շեշտը դնում են միայն ձեռնարկության ունեցած ռեսուրսների վրա՝ անուշադրության մատնելով դրանց օգտագործման արդյունավետությունը [1]: Հարկ է նշել, որ ձեռնարկության ինովացիոն գործունեության գնահատման մեթոդակարգերն այնքան բարդ են, որ պիտանի չեն գործնական կիրառման համար, ինչը նվազեցնում է դրանց գրավչությունը ժամանակակից ձեռնարկությունների համար, որոնք գործում են սպառման դինամիկ շուկայում:

Ռազմավարական ինովացիոն փոփոխությունների դեպքում իրականացվող գործողությունների արագությունը կամ, այսպես կոչված, նորարարությունների ներդրման դինամիկան այս մեթոդակարգով հանդիսանում է ինովացիոն գործունեության արդյունքային, իսկ մնացածները՝ որակական, քանակական և ռեսուրսային ցուցանիշներ: Անհրաժեշտ է նշել, որ ձեռնարկության ինովացիոն գործունեության շատ հայտանիշեր, որոնք առաջարկվում են գիտնականների կողմից, դժվար գնահատվող են (օրինակ, ինովացիոն պոտենցիալի կենտրոնացման մակարդակը), իսկ մյուս ցուցանիշները հակասական են (օրինակ, եթե ինովացիոն գործունեության մակարդակը չհիմնավորված բարձր է, ապա ինովացիոն գործունեության ընդհանուր մակարդակը կլինի ցածր) [2]:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում մշակել ձեռնարկության ինովացիոն գործունեության մակարդակը գնահատող համալիր համակարգ, որը հաշվի կառնի դրա արդյունքային, ռեսուրսային և վիճակագրական բաղադրամասերը:

Առաջարկվող մեթոդի շրջանակներում անհրաժեշտ է կատարել ինովացիոն գործունեության յուրաքանչյուր բնութագրի գնահատում և համեմատել դա առաջատար ձեռնարկության համապատասխան ցուցանիշի, այսինքն՝ գնահատվող բնութագրի առավելագույն արժեքի հետ:

Ձեռնարկության ինովացիոն գործունեության յուրաքանչյուր ցուցանիշ կարող է ստանալ արժեք 0-ից 1 միջակայքում: Հետևաբար, 1-ի հավասար ցուցանիշի արժեքը նշանակում է, որ ձեռնարկությունն առաջատար է հանդիսանում տվյալ բնութագրի շրջանակներում, իսկ 0-ին մոտ արժեքը բնութագրում է ձեռնարկությունում ինովացիոն գործունեության բացակայությունը:

Մեր հետազոտության օբյեկտը Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկան է, որը զբաղվում է հատուկ նշանակության հագուստի, գոգնոցների, բժշկական և բանվորական խալաթների, կանացի, տղամարդու և մանկական կոստյումների,

անդրավարտիքների, կուրտկաների, վերնաշապիկների, վերարկուների, կիսավերարկուների, կանացի շորտերի և կիսաշրջագգեստների արտադրությամբ:

Կարի ֆաբրիկայի ինովացիոն գործունեության ռեսուրսային տարրերի քանակական բաղադրիչի մակարդակը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$FQ_{ռես.քան} = \sum_{i=1}^2 k_i \cdot \sum_{j=1}^{1...5} k_j \cdot a_{ij}, \quad (1)$$

որտեղ k_i -ն ռեսուրսային բյուջի քանակական բաղադրիչի i -րդ տարրի տեսակարար գործակիցն է, k_j -ն՝ համապատասխան տարրի j -րդ բնութագրի տեսակարար գործակիցը:

Յուրաքանչյուր տարրի արժեքի նշանակալի մասը և, համապատասխանաբար, դրա տեսակարար գործակցի արժեքը ձեռնարկության ինովացիոն գործունեության՝ ռեսուրսային բնութագրի քանակական բաղադրիչի ընդհանուր մակարդակի մեջ սահմանվում է փորձագիտական ճանապարհով: Յուրաքանչյուր գործակցի արժեքը տատանվում է 0-ից մինչև 1 միջակայքում: Հետևաբար, իրավացի են հետևյալ հավասարությունները՝

$$\sum k_i = 1, \sum k_j = 1: \quad (2)$$

Կարի ֆաբրիկայի ինովացիոն պոտենցիալի յուրաքանչյուր տարր գնահատվում է մի շարք չափանիշներով (աղ.):

Աղյուսակ

Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկայի ինովացիոն գործունեության գնահատումը

Ցուցանիշի անվանումը	Հաշվարկային բանաձև	Ձեռնարկության ցուցանիշը	Ցուցանիշի նշանակալիությունը
1	2	3	4
I. Սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշը	$K_{u,h,2} = \mathcal{R}\mathcal{C} / U\mathcal{C} (3)$, որտեղ $\mathcal{R}\mathcal{C}$ -ը ձեռնարկության զուտ շահույթն է [դրամ], $U\mathcal{C}$ -ն՝ ձեռնարկության սեփական կապիտալը [դրամ]:	0,19	0,08
II. Իրացված ինովացիաների (գյուտեր, նոու-հաու, ինովացիոն լուծումներ, գաղափարներ) շահութաբերության ցուցանիշը	$K_{p,h,2} = \tilde{\mathcal{C}}_p / U_p (4)$, որտեղ $\tilde{\mathcal{C}}_p - \tilde{u}$ ՝ ինովացիայից ստացված շահույթն է [դրամ], $U_p - \tilde{u}$ ՝ ինովացիայի արժեքն է [դրամ]:	0,04	0,13

Աղյուսակի շարունակությունը

1	2	3	4
III. Հիմնական արտադրական ֆոնդերի (ՀԱՖ) առաջընթացի գործակիցը	$K_{ար.ՀԱՖ} = \frac{ՀԱՖ_{գործ}}{ՀԱՖ_{ա.ա.}}$ (5), որտեղ $ՀԱՖ_{գործ}$ - ը հնովացիոն գործընթացում ներգրավված սարքավորման (ՀԱՖ) հաշվեկշռային արժեքն է ժամանակահատվածի վերջում [դրամ], $ՀԱՖ_{ա.ա.}$ - ն՝ ամբողջ սարքավորման (ՀԱՖ) հաշվեկշռային արժեքը ժամանակահատվածի վերջում [դրամ]:	0,1	0,09
IV. Սարքավորման (ՀԱՖ) արդիականացման գործակիցը	$K_{արդ.ՀԱՖ} = \frac{ՀԱՖ_{արդ.}}{ՀԱՖ_{ա.ա.}}$ (6), որտեղ $ՀԱՖ_{արդ.}$ - ը արդիականացում անցած սարքավորման (ՀԱՖ) հաշվեկշռային արժեքն է [դրամ]:	0,4	0,05
V. 10 տարուց պակաս շահագործման ժամկետ ունեցող սարքավորման մասնաբաժինը (տեսակարար կշիռը)	$S_{սարք.10} = \frac{K_{սարք.10}}{K_{սարք.գում.}}$ (7), որտեղ $K_{սարք.10}$ - ը 10 տարուց պակաս շահագործման ժամկետ ունեցող սարքավորման (ՀԱՖ) միավորների քանակն է, [հատ], $K_{սարք.գում.}$ - ը՝ սարքավորման ընդհանուր միավորների քանակը, [հատ]:	0,2	0,05
VI. Կարի ֆաբրիկայի արդյունավետության բարձրացմանն ուղղված հնովացիոն միջոցառումների քանակը	-	0,5	0,07
VII. Սարքավորման (ՀԱՖ) պիտիանության գործակիցը	$K_{պիտ} = 1 - K_{մաշ} = 1 - \frac{I_{մաշ.գում.}}{ՆՀԱ}$ (8), որտեղ $I_{մաշ.գում.}$ - ը ամորտիզացիան է [դրամ], $ՆՀԱ$ - ը՝ սարքավորման նախնական հաշվեկշռային արժեքը [դրամ]:	0,26	0,05

1	2	3	4
VIII. Նոր ինովացիոն նախագծերում ներգրավված անձնակազմի մասնաբաժինը	$U_{ին.նախ.} = \frac{U_{ին.նախ.}}{U_{միջ.ցուց.}} \cdot 100\% (9),$ որտեղ $U_{ին.նախ.}$ - ը ինովացիոն նախագծերում ներգրավված ձեռնարկության անձնակազմի մասնաբաժինն է [%], $U_{ին.նախ.}$ - ը՝ նոր (ինովացիոն) նախագծերում ներգրավված ձեռնարկության անձնակազմի քանակը, [մարդ], $U_{միջ.ցուց.}$ - ը՝ ձեռնարկության միջին ցուցակային անձնակազմի քանակը [մարդ]:	18,0	0,06
IX. Գիտատեխնիկական մասնագետների մասնաբաժինը ձեռնարկության անձնակազմի ընդհանուր թվաքանակի մեջ	$U_{գիտ.տեխ.} = \frac{U_{գիտ.աստ.}}{U_{ընդ.}} \cdot 100\% (10),$ որտեղ $U_{գիտ.տեխ.}$ - ը գիտատեխնիկական մասնագետների մասնաբաժինն է ձեռնարկության անձնակազմի ընդհանուր թվաքանակի մեջ [%], $U_{գիտ.աստ.}$ - ը՝ գիտական աստիճան ունեցող մասնագետների քանակը, [մարդ], $U_{ընդ.}$ - ը՝ ձեռնարկության անձնակազմի ընդհանուր քանակը, [մարդ]:	2,0	0,03
X. Ձեռնարկության գիտական աշխատակիցների որակավորման մակարդակը	$\Omega U_{գիտ.աշխ.} = \frac{U_{գիտ.աշխ.}}{q U_{ընդ.}} \cdot 100\% (12),$ որտեղ $\Omega U_{գիտ.աշխ.}$ - ը ձեռնարկության գիտական աշխատակիցների որակավորման մակարդակն է [%],	2,0	0,05
XI. Մեկ նորարարության մշակման միջին տևողության հակադարձ մեծությունը	$\frac{1}{\tau_{մշակ.1}} = \frac{N}{\tau_i} (13),$ որտեղ $\tau_{մշակ.1}$ - ը մեկ նորարարության (ինովացիայի) մշակման միջին տևողությունն է [տարի], N - ը՝ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումների հետևանքով ստեղծված ինովացիաների (գյուտեր, նութաու, ինովացիոն լուծումներ) ընդհ. քանակ.[հատ], τ_i - ն՝ i - րդ ինովացիայի ստեղծման վրա ծախսված ժամանակը[տարի]	-	0,11

Աղյուսակի շարունակությունը

1	2	3	4
XII. Նորարարությունների ներդրման արդյունավետությունը	$U_{ներդ.} = \frac{K_{եներդ.ներ}}{K_{եմշակ.ներ}}$ (14), որտեղ $U_{ներդ.}$ - ը նորարարությունների (ինովացիաների) ներդրման արդյունավետությունն է, $K_{եներդ.ներ}$ - ը և $K_{եմշակ.ներ}$ - ը՝ ներդրված և մշակված նորարարությունների քանակները t ժամանակահատվածում [տարի]:	1,0	0,1
XIII. Մեկ նորարարության յուրացման միջին տևողության հակադարձ մեծությունը	$\frac{1}{\tau_{յուր.1}} = \frac{N}{\tau_i}$ (15), որտեղ $\tau_{յուր.1}$ - ը մեկ նորարարության (ինովացիայի) յուրացման միջին տևողությունն է [տարի], N - ը՝ յուրացված ինովացիաների քանակը [հատ], τ_i - ն՝ i - րդ ինովացիայի յուրացման վրա ծախսված ժամանակը [տարի]:	1,67	0,1

Կարի ֆաբրիկայի ինովացիոն գործունեության ռեսուրսային տարրի որակական բաղադրիչի ընդհանուր մակարդակը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$FQ_{նես.որակ} = \sum_{i=1}^3 K_i \cdot \sum_{j=1}^{3..4} K_j \cdot a_{ij} : \quad (16)$$

Ձեռնարկության ինովացիոն գործունեության այս ցուցանիշն ընդունում է արժեքներ 0 – ից 1 միջակայքում:

Ինովացիոն գործունեության համալիր գնահատման առաջարկվող արդյունարար բլոկն անհրաժեշտ է ինովացիոն գործընթացի դինամիկայի բացահայտման, ինչպես նաև ինովացիոն գործընթացի արդյունքում ձեռնարկության կողմից ստացված արդյունքների գնահատման համար:

Կարի ֆաբրիկայի ինովացիոն գործունեության այս ցուցանիշն արժեքներ է ընդունում 0 – ից 1 միջակայքում և որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$FQ_{վիճ} = \sum_{i=1}^8 k_i \cdot \sum_{j=1}^{2..5} k_j \cdot a_{ij} : \quad (17)$$

Կարի ֆաբրիկայի ինովացիոն ակտիվության վիճակագրական տարրի մակարդակը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$FQ_{վիճ} = \sum_{i=1}^2 k_i \cdot a_i : \quad (18)$$

Ձեռնարկության ինովացիոն ակտիվության վիճակագրական տարրի մակարդակը՝ ըստ արժեքի, գտնվում է 0 – ից 1 քանակական միջակայքում:

Հետազոտության արդյունքները. Կարի ֆաբրիկայի ինովացիոն գործունեության համալիր ցուցանիշի գնահատման համար առաջարկվում է օգտագործել գրաֆիկական եղանակ, ընդ որում, ինովացիոն գործունեության ինտեգրալային արժեքը որոշվում է որպես քառանկյան մակերես, որի գագաթների կոորդինատները համապատասխանում են ինովացիոն գործունեության ռեսուրսային բաղադրիչի քանակական և որակական տարրերի ու արդյունքային և վիճակագրական բաղադրիչների արժեքներին:

Գրաֆիկական եղանակով հաշվարկված քառանկյան մակերեսը բնութագրում է Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկայի ընթացիկ ինովացիոն գործունեության մակարդակը.

$$S = \frac{1}{2} (FQ_{nku,puw} \cdot FQ_{nku,nrw} + FQ_{nku,nrw} \cdot FQ_{wpr} + FQ_{wpr} \cdot FQ_{vhd} + FQ_{vhd} \cdot FQ_{nku,puw}) \cdot \sin \frac{360}{4} = \frac{1}{2} (FQ_{nku,puw} \cdot FQ_{nku,nrw} + FQ_{nku,nrw} \cdot FQ_{wpr} + FQ_{wpr} \cdot FQ_{vhd} + FQ_{vhd} \cdot FQ_{nku,puw}): \quad (19)$$

Եթե ունենանք նույնանման տվյալներ մրցակից ձեռնարկությունների համար, ապա կարելի է անցկացնել համատարածական վերլուծություն՝ ի հայտ բերելով փոփոխությունները մի քանի ժամանակահատվածներում, և վերլուծել մրցակից ձեռնարկությունների ինովացիոն գործունեության դինամիկան շուկայի որոշակի հատվածում:

Օգտվելով աղյուսակային տվյալներից՝ Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկայի համար կստանանք՝

$$FQ_{nku,puw} = \sum_{i=1}^2 k_i \cdot \sum_{j=1}^{1..5} k_j a_{ij} = (k_1 + k_2) \cdot (k_1 a_{11} + k_1 a_{12} + k_2 a_{12} + k_2 a_{22} + k_3 a_{13} + k_3 a_{23} + k_4 a_{14} + k_4 a_{24} + k_5 a_{15} + k_5 a_{25}) = 0,21 \cdot 0,0952 \approx 0,02: \quad (20)$$

$$FQ_{nku,nrw} = \sum_{i=1}^3 k_i \cdot \sum_{j=1}^{3..4} k_j \cdot a_{ij} = (k_1 + k_2 + k_3) \cdot (k_3 \cdot a_{13} + k_3 \cdot a_{23} + k_3 \cdot a_{33} + k_4 \cdot a_{14} + k_4 \cdot a_{24} + k_4 \cdot a_{34}) = 0,3 \cdot 0,0462 \approx 0,0139: \quad (21)$$

$$FQ_{wpr} = \sum_{i=1}^p k_i \sum_{j=1}^{2..5} k_j \cdot a_{ij} = (k_1 + k_2 + k_3 + k_4 + k_5 + k_6 + k_7 + k_8) \cdot (k_2 \cdot a_{12} + k_2 \cdot a_{22} + k_2 \cdot a_{32} + k_2 \cdot a_{42} + k_2 \cdot a_{52} + k_2 \cdot a_{62} + k_2 \cdot a_{72} + k_2 \cdot a_{82} + k_3 \cdot a_{13} + k_3 \cdot a_{23} + k_3 \cdot a_{33} + k_3 \cdot a_{43} + k_3 \cdot a_{53} + k_3 \cdot a_{63} + k_3 \cdot a_{73} + k_3 \cdot a_{83} + k_4 \cdot a_{24} + k_4 \cdot a_{34} + k_4 \cdot a_{44} + k_4 \cdot a_{54} + k_4 \cdot a_{64} + k_4 \cdot a_{74} + k_4 \cdot a_{84} + k_5 \cdot a_{25} + k_5 \cdot a_{35} + k_5 \cdot a_{45} + k_5 \cdot a_{55} + k_5 \cdot a_{65} + k_5 \cdot a_{75} + k_5 \cdot a_{85}) = 0,58 \cdot 0,598 = 0,347: \quad (22)$$

$$FQ_{vhd} = \sum_{i=1}^2 k_i a_i = k_1 a_1 + k_2 a_2 = 0,0204: \quad (23)$$

Հետևաբար, Վանաձորի «Գլորիա» ֆաբրիկայի ընթացիկ ինովացիոն գործունեության մակարդակը կկազմի՝

$$FQU = S = \frac{1}{2}(0,02 \cdot 0,0139 + 0,0139 \cdot 0,347 + 0,347 \cdot 0,0204 + 0,0204 \cdot 0,02) = \\ = \frac{1}{2}(0,000278 + 0,00482 + 0,007079 + 0,000408) = \frac{1}{2} \cdot 0,0126 = 0,0063: (24)$$

Այսպիսով, ձեռնարկության ինովացիոն գործունեության արդյունավետության համալիր գնահատման առաջարկվող մեթոդն ընդգրկում է ինովացիոն գործունեության հետազոտվող ռազմավարական բնութագրի հետևյալ առանցքային տարրերը՝ ռեսուրսային, արդյունքային և վիճակագրական բաղադրիչները: Առաջարկված մեթոդի օգտագործումը թույլ կտա որոշել ձեռնարկության առաջնության աստիճանը՝ շուկայի վերլուծվող հատվածում:

Եզրակացություն.

1. Մշակվել է արդյունաբերական ձեռնարկության ինովացիոն գործունեության արդյունավետության համալիր գնահատման մաթեմատիկական մոդելը, որը ներառում է ռեսուրսային, արդյունքային և վիճակագրական բաղադրիչները:

2. Կատարվել է Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկայի ինովացիոն գործունեության արդյունավետության համալիր գնահատում: Այդ ֆաբրիկայի ընթացիկ ինովացիոն գործունեության մակարդակը՝ ըստ մշակված մոդելի, կազմում է 0,01 կամ 1%, որը շատ ցածր է, և ձեռնարկությունը պետք է մեծ ուշադրություն դարձնի ինովացիոն գործունեությանը:

3. Օգտագործելով ինովացիոն գործունեության արդյունավետության համալիր գնահատման մշակված մոդելը ոլորտի տարբեր ձեռնարկությունների համար՝ կարելի է որոշել դրանց առաջնության աստիճանը՝ շուկայի վերլուծվող հատվածում:

ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Баранчев В.П., Масленникова Н.П., Мишин В.М.** Управление инновациями.- М.: Юрист, 2011.-711с.
2. **Фатхудинов Р.А.** Инновационный менеджмент.-СПб.: Питер, 2011.-448с.

Դ.Տ. ՏԱՐԱԲՅԱՆ, Տ.Ն. ՄԿՕՅԱՆ

КОМПЛЕКСНАЯ ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕДПРИЯТИЯ (На примере швейной фабрики “Глория”)

Предлагаемый метод оценки эффективности инновационной деятельности предприятия включает в себя ресурсные, результирующие и статистические компоненты, каждый из которых оценивает инновационную деятельность исследуемой стратегической характеристики соответствующего элемента.

Ключевые слова: инновация, удельный коэффициент, ноу-хау, коэффициент модернизации, коэффициент годности.

H.S. SARAFIAN, S.N. MKOYAN

**COMPLEX ESTIMATION OF EFFICIENCY OF THE INNOVATIVE
ACTIVITY OF AN ENTERPRISE
(On the example of the garment factory “Gloria”)**

The proposed method for assessing the effectiveness of innovative activity of the enterprise includes: resource resulting and statistical components each of which evaluates the innovative activity of the strategic characteristics of the relevant element.

Keywords: innovation, specific coefficient, know-how, coefficient of modernization, coefficient of validity.

ՀՏԴ 338.45.01

Ս.Ն. ՄԿՈՅԱՆ, Լ.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, Ն.Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՈՎԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
(Գյումրի)**

Կատարվել է ձեռնարկությունների ինովացիոն պոտենցիալի համեմատական գնահատում մաթեմատիկական մոդելի միջոցով, որը թույլ է տալիս անորոշության պայմաններում ընտրել ձեռնարկության համար օպտիմալ լուծումներ:

Առանցքային բաներ. ինովացիա, երաշխավորված արդյունք, երաշխավորված կորուստներ, մաթեմատիկական մոդել:

Ներածություն. Լրիվ անորոշության պայմաններում օպտիմալ ինովացիոն լուծումների որոնման խնդիրների համար առավել արդյունավետ են քանակական մեթոդները, որոնք հաշվի են առնում չկառավարվող գործոնների առկայությունը:

Այդ մեթոդների օգտագործման դեպքում առաջանում են օպտիմալության նույնական սկզբունքների ընտրության հիմնախնդիրները [1]:

Աշխատանքում դիտարկվում է երաշխավորված արդյունքի և երաշխավորված կորուստների սկզբունքների կիրառման հնարավորությունը՝ ձեռնարկության օպտիմալ ինովացիոն լուծումների ընտրության համար:

Կիրառենք երաշխավորված արդյունքի և երաշխավորված կորուստների սկզբունքները տեքստիլ և թեթև արդյունաբերության չորս ձեռնարկություններում՝ օպտիմալ ինովացիոն լուծումների ընտրության համար՝ անորոշության պայմաններում [2]:

Նշանակենք արտադրությունների տեսակների հավաքակազմը՝